ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Երաժշտություն

Մասնակից՝ Բալայան Քրիստինա

Ղեկավար՝ Խրիմյան Հռիփսիմե

Թեմա՝ Սովորողների մոտ մշակութային կարողունակությունների զարգացման նպատակով երաժշտություն առարկայի դասավանդման ընթացքում ուսուցչի կողմից կիրառվող միջոցների և մեթոդների ընտրության հարցեր

-2022-

Բովանդակություն

Ներածություն_____էջ

Գլուխ I

Մշակույթ: Մշակութային կարողունակություն: Երաժշտության դերը մշակութային կարողունակության ձևավորման գործում_____էջ

Գլուխ I I

Մշակութային զարգացման նպատակով կիրառվող մեթոդները_____էջ

2.1.Խաղը՝ որպես մշակութային կարողունակությունը ձևավորող միջոց_____էջ

Եզրակացություն_____էջ

Օգտագործված գրականության ցանկ_____էջ

Հավելված_____էջ

Ներածություն

Հետազոտության արդիականությունը

Կրթական գործառույթը իրականացվում է անհատական ստեղծագործական եղանակով: Ելնելով մշակույթ, մշակութային կարողունակություն հասկացություններից՝ կարող ենք տալ սովորողի հետևյալ բնութագիրը .նա պետք է օժտված լինի ինքնուրույնությամբ ,մշակութային արժեքները ճիշտ հասկանալու, վերլուծելու և գնահատելու կարողունակությամբ, ստեղծագործական ունակությամբ, հետազոտական կարողունակությամբ, և ունենա շատ այլ ունակություններ և հմտություններ:

Սակայն շատ սովորողների մոտ դրանք այնքան էլ զարգացած չեն և անհրաժեշտ է դրանք զարգացնել, ինչի շնորհիվ կմեծանա սովորողի հետաքրքրությունը ցանկացած առարկայի, այդ թվում երաժշտություն առարկայի ուսումնասիրման նկատմամբ: Այս պարագայում օգնության են գալիս ճիշտ ընտրված մեթոդների շարքն ու միջոցները:

Հետազոտական աշխատանքի նպատակը:

Նպատակն է արդյունավետ մեթոդների, հնարների և այլ միջոցների կիրառմամբ սովորողների մոտ խթանել ուսումնական, իմացական, ստեղծագործական ներուժը, որը կիրականացվի հետազոտական ունակությունների կատարելագործման և զարգացման, հետազոտական հմտությունների ձևավորման միջոցով:

Հետազոտության խնդիրն է.

Աշակերտների մոտ ձևավորել մշակութային կարողունակություններ՝ համապատասխան ընտրված մեթոդների և

միջոցների օգնությամբ, որոնք կնպաստեն նրա ինքնուրույն ուսումնառությանը, կձևավորեն այնպիսի կարողություններ, որը կհանգեցնի դրված նպատակին:

Հետազոտական աշխատանքի մեթոդաբանական հիմքը:

Այս աշխատանքն իրականացնելու համար նախատեսվում է աշխատանքների հետևյալ հաջորդականությունը. հետազոտական խնդրի վերաբերյալ հոգեբանական և մանկավարժական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, սովորողների ստեղծագործական աշխատանքների դիտարկում., առաջադեմ մանկավարժական փորձի ուսումնասիրություն և ընդհանրացում, փորձի արդյունքների մշակման վիճակագրական մեթոդների կիրառում:

Հետազոտության տեսական նշանակությունը

հանդիսանում է՝ -աշակերտների մոտմշակութային արժեքների նկատմամբ մակարդակի հստակ տեսական մոտեցումներ՝ հաշվի առնելով այս անհատականության հատկանիշի մոտիվացիոն, կամային և բովանդակային-գործառնական բաղադրիչների զարգացումը.

- ✓ աշակերտների գեղագիտական ճաշակը զարգացնելու համալիր միջոցներ
- ✓ սովորողների ճանաչողական անկախության զարգացմանն ուղղված ուսումնական գործընթացի կազմակերպում:

Հետազոտության գործնական նշանակությունը

Նպաստում է արդյունավետ կազմակերպել աշակերտների ճանաչողական, հոգեբանական, գործողությունները՝ համագործակցելով աշակերտների և ծնողների հետ, առավել հետաքրքիր և ամփոփ դարձնել ուսումնական գործընթացը, որտեղ կարևորագույն գործոն է մշակույթը, մշակութային արժեքների ճիշտ կազմակերպման գործում կիրառվող մեթոդները, միջոցները,

այն է խաղը, որոնք բեկումնային ազդեցություն են ունենում դասապրոցեսի արդյունավետիրականացման գործում:

Գլուխ I

Մշակույթ: Մշակութային կարողունակություն: Երաժշտության դերը մշակութային կարողունակության ձևավորման գործում

Մշակույթ

Մշակույթ հասկացությունը ունի լատիներեն ծագում. առաջացել է colore արմատից, այն է՝ մշակել, խնամել:

Մշակույթը մարդկային իմացության, համոզմունքների ու հասարակությամբ սահմանված կարգերի հասկացություն է, որը մենք փոխանցում ենք սերնդեսերունդ: Մշակույթը այն հիմնական գործոնն է, որն օգնում է մարդկանց հաղորդակցվել, և

կարգավորում է հաղորդակցության տարբեր ոլորտները՝ սկսած զրույցներից մինչև համաշխարհային տնտեսության զարգացում:[1]

Մշակույթը կենտրոնական հայեցակարգ է մարդաբանության մեջ և ներառում է այն բոլոր երևույթները, որ սոցիալական ուսուցման միջոցով փոխանցվում են մարդկային հասարակություններում: Մշակույթի յուրացումը հասարակության կամ խմբի ներսում տեղի է ունենում ուսուցման միջոցով: Ընդհանուր առմամբ, մշակույթ հասկացությունը կարելի է սահմանել այսպես. **հասարակության և մարդու զարգացման որոշակի մակարդակ, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով և տիպերով:**

Մշակույթի հիմնական տեսակներն են՝ համամարդկային, գերմշակույթ կամ սուպերմշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ,շեղվող, անձնային մշակույթներ:

Մշակութային կարողունակություն

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Ելնելով հետազոտվող թեմայի առանցքային կողմերից՝ դիտարկենք միջնակարգ կրթության կարողունակություններից **մշակութային կարողունակությունը:**

Մշակութային կարողունակություն. սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք

[1] Wikipedia.org

արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:[2]

Մշակութային կարողունակության նկարագրիչները

Գիտելիք՝

- Ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր:
- Տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթում:
- Ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթում:
- Տարբեր ժամանակաշրջանների հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների փոխկապակցվածությունը:
- Տարբեր կրոնական ավանդույթներում առկա ընդհանրություններն ու տարբերությունները:
- Տարբեր մշակույթներ, մասնավորապես՝ արժեքներ, սովորույթներ և հմտություններ, որոնք հատուկ են այդ մշակույթներին: **Հմտություններ**

[2] www.arlis.am

- Արվեստի որոշ տեսակներում կատարել ստեղծագործական աշխատանքներ:
- Արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտել սեփական գաղափարները:
- Մշակել և իրականացնել մշակութային նախագծեր:
- Քննադատաբար անդրադառնալ իր սեփական աշխարհայացքին՝ որպես բազմաթիվ աշխարհայացքներից մեկին:
- Քննադատաբար անդրադառնալ, թե ժամանակի ընթացքում ինչպես է գաղափարը զարգացել տարբեր մշակույթներում տարբեր ձևերով:
- Հարմարվել տարբեր մշակութային պատկանելիություն ունեցող անձնանց հանդիպելիս և շփվելիս:
- Վերլուծել այլ մշակույթներում առկա տարբեր տեսակետներ:
- Արտահայտել, հիմնավորել և պաշտպանել սեփական տեսակետը և դիրքորոշումը:

Վերաբերմունք

- Արտահայտել կամ վիճարկել սեփական գաղափարները և արժեքները:
- Ցուցաբերել հարգանք և հետաքրքրություն տարբեր մշակույթների նկատմամբ:
- Փնտրել ընդհանուր եզրեր իրենից գաղափարապես և արժեքային համակարգով տարբեր մարդկանց հետ քննարկումներ իրականացնելիս:
- Արտահայտել հետաքրքրասիրություն այլ հավատալիքների, մեկնաբանությունների և մշակութային այլ կողմնորոշումների ու պատկանելիության նկատմամբ:
- Ցուցաբերել տարբեր մշակութային պատկանելիություն ունեցող մարդկանց հետ աշխատելու հետաքրքրություն:
- Ողջունել տարբեր արժեքներ, սովորույթներ և վարքագիծ ունեցող մարդկանց հանդիպելու հնարավորությունները:

- Կարևորել իր՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և ցուցաբերել պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում:
- Արժեք

- Մշակութային ընկալում և արժևորում:
- Արտահայտել այն կարծիքը, որ հասարակության մեջ մշակութային տարբերությունը պետք է դրականորեն արժևորվի և գնահատվի:
- Արժևորել միջմշակութային երկխոսությունը:
- Ներկայացնել հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթում և համաշխարհային մշակույթի դերը համամարդկային արժեքների համատեքստում:

Մշակութային կարողունակությունը ձևավորող վերջնարդյունքները Հանրակրթության պետական չափորոշչով (ՀՊՉ) սահմանված կարողունակությունները ձևավորելու նպատակով սահմանված են համապատասխան վերջնարդյունքներ:

Գլուխ II

Մշակութային զարգացման նպատակով կիրառվող մեթոդները

Երաժշտամանկավարժական գործընթացի արդյունավետությունը մեծ մասամբ կախված է երաժշտության ուսուցման գործընթացում օգտագործվող մեթոդներից: «Մեթոդ» բառը առաջացել է հունարեն methodos բառից և նշանակում է հետազոտման, ուսուցման ուղի, եղանակ, միջոց և մեկնաբանվում է որպես բնության, հասարակության, մտածողության երևույթների և օրինաչափությունների ուսուցման

կանոնների ու գործունեության ձևերի համակարգ, այն է՝ «ուսուցման մեթոդ» հասկացությունը:

Արդիական է երաժշտության ուսուցման մեթոդների դասակարգումը, որն օգնում է երաժշտության ուսուցման մեջ հայտնաբերել մշակութային զարգացման յուրահատկություններ, նոր ուղիներ, նոր մոտեցումներ, որոնք նպաստում են մշակութային գործունեությունը արդյունավետ իրականացնելուն:

Մշակութային տարրերի, ուսուցանվող նյութի ստեղծագերծաբար ամրապնդմանը, ընունակությունների և ստեղծագործական մտածողության զարգացմանը, երաժշտական մշակույթի յուրացմանն ու վերարտադրմանը բնորոշ են Ի. Լերների և Մ. Սկատկինի ուսուցման մեթոդների հետևյալ դասակարգումը:[3]

- **Բացատրական-ցուցադրական** մեթոդների կիրառմամբ ուսուցման գործունեության ընթացքում դասավանդողը տարբեր միջոցներով փոխանցում է պատրաստի տեղեկություն մշակութային հարցերի շուրջ, իսկ սովորողներն այն ընկալում են գիտակցելով և ամրակայում հիշողության մեջ: Այս մեթոդները կիրառելիս օգտագործում են մի շարք ձևեր ու միջոցներ՝ պատմվածք, դասախոսություն, զրույց, ցուցադրում և այլն:
- **Վերարտադրողական մեթոդների** կիրառմամբ պատրաստի գիտելիքները յուրացվում և վերարտադրվում են սովորողների կողմից՝ ըստ դասավանդողի կողմից նախապես առաջադրված ալգորիթմների, որոնք միտված են մշակութային բնույթի հարցեր պարզաբանելու համար: Բազմաթիվ կրկնությունների միջոցով ամրապնդվում են ձեռք բերված գիտելիքները ազգային և համամարդկային բնույթի թեմաների շուրջ, սակայն չի ապահովվում ստեղծագործական ունակությունների, երաժշտական ստեղծագործության կատարողական արվեստի մեկնաբանման զարգացումը: Հիմնականում օգտագործվում են վարժություններ, առաջադրանքներ, որևէ գործողության կատարման հրահանգներ, տրվում են ալգորիթմներ, դաստիարակչական օրինակելի իրավիճակներ, դասախոսություններ և այլն:
- **Ուսումնական նյութը պրոբլեմային ձևով ներկայացնելու մեթոդները** կիրառելիս ուսուցիչը սովորողներին առաջադրում է խնդիր և նշելով առկա հակասությունները՝

[3] Գևորգյան Ա. Երաժշտական-կատարողական տեխնոլոգիաներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ/Աբովյան 2015.- 120 էջ:

ցույց է տալիս դրանց լուծման ուղիները կամ մղում է ինքնուրույն լուծելու առկա հիմնախնդիրն ու պրոբլեմային իրավիճակը: Այս մեթոդը բավականաչափ արդյունավետ է երաժշտության վերլուծության ժամանակ, որտեղ տրվում է նաև տվյալ ստեղծագործության մշակութային արժեքը: Այստեղ սովորողները ծանոթանում են ստեղծագործության կառուցվածքին, կոմպոզիտորական մտահաղացմանը, սովորում են արժևորել ստեղծագործության մշակութային կողմը և կատարել վերլուծություն:

Կարելի է կիրառել աշխատանքի հետևյալ ձևերը՝ զրույց, խաղ, պրոբլեմային իրավիճակ, խնդիրներ, ընդհանրացում:

➢ **Ուսուցման հետազոտական մեթոդները** նպատակաուղղված են ճանաչողական խնդիրների ստեղծագործական լուծմանը, որը իրականացնում է ինքնուրույն:

Երաժշտամանկավարժական գործունեության մեջ «մեթոդը» լայն իմաստով, ըմբռնվում է որպես մանկավարժական տարբեր հնարների, եղանակների, մոտեցումների, միջոցների կիրառում, որոնք ուղղված են լուծելու երաժշտական դաստիարակության տարատեսակ խնդիրներ: Նեղ իմաստով «մեթոդ» հասկացությունը համարվում էայս կամ այն միջոց, հնար, ուղղվածություն, որով պետք է զարգացնել հուզական վերաբերմունք երաժշտության մշակութային արժեքի հանդեպ, արժևորելու երաժշտության դերը, երաժշտական գիտելիքների, հմտությունների միջոցով փորձ ձեռք բերելու ստեղծագործական գործունեության համար, ձևավորելու երաժշտական ճաշակ, զարացնելու ընդհանուր և երաժշտական ընդունակությունները, ինչպես նաև երևակայությունը:

Դ.Կաբալևսկու հայեցակարգի ստեղծումը կարևոր գործոն դարձավ՝ երաժշտական մի շարք մեթոդների մշակման համար, որոնք ուղղված էին երեխաների՝ երաժշտության գիտակցական ընկալմանը:

Ուսուցման գործընթացում մշակվեցին երաժշտության ուսուցման հատուկ մեթոդներ, որոնք միտված են սովորողների մշակութային դաստիարակմանը, այն է.

➢ **«Հուզական դրամատուրիայի մեթոդը»** Դ. Կաբալևսկու, Աբդուլինի մշակված, ակտիվացնում է սովորողների հուզական վերաբերմունքը երաժշտության

նկատմամբ: Հուզական դրամատուրգիայի մեթոդի շնորհիվ կարելի է կազմաերպել այնպիսի դասեր, որոնցում առկա է դրամատուրգիական որոշակի լուծում հետևյալ փուլերով.

- Ինդուկցիա՝ նախաբան
- Կոմպոզիցիայի կառուցում
- Դասի հուզական գեղագիտական բարձրակետ
- Դասի ավարտ

➢ «**Երաժշտական նյութի կենտրոնացված կազմակերպման**» մեթոդական խումբը ներառում է երկու մեթոդ: Առաջին մեթոդն առաջարկում է ըստ դասաժամի կիսամյակային կտրվածքի կրկնել նույն ստեղծարարությունը տարբեր հանձնարարություններով: Երկրորդ մեթոդն առաջարկում է նոր ստեղծարարությունը ներկայացնել՝ հիմնվելով երեխաների արդեն ծանոթ ինտոնացիաների, թեմաների, կերպարների վրա:

➢ **«Պարուրաձև» ընդհանրացման մեթոդը ներառում է երկու կողմ՝**

ա/առկա են որոշակի նախադրյալներ ստեղծարարությունների ուսումնասիրումն ու ընդհանրացումն առավել արդյունավետ իրականացնելու համար,

բ/ընդհանրացումն օգտագործվում է թեմատիկ նյութի յուրացման գործընթացի և՛ սկզբում, և՛ վերջում, որը կողմնորոշիչ է ծրագրի բոլոր տարրերը յուրացնելու համար:

➢ **«Առաջ գնալու և հետ դառնալու»մեթոդի** հեղինակն է Դ. Կաբալևսկին. հայտնի է նաև որպես Աբդուլինի **«Երաժշտական կրթության գործընթացում հեռանկարի և հետադարձի մեթոդ»:** Այն թույլ է տալիս տարբեր կապեր ստեղծել ծրագրի թեմաների, երաժշտական ստեղծագործությունների միջև՝ նպաստելով Երաժշտության մասին դպրոցականների ամբողջական պատկերացումների ձևավորմանը, այս կամ այն թեմայի կամ արվեստի ստեղծագործության առավել խոր ուսումնասիրմանը:[4]

[4] Данилов М.А. Процесс обуЧения в советской школе/ Данилов М.А..-М; 1960

Դ. Կաբալևսկու **«Երաժշտության մասին մտորելու մեթոդի»** միջոցով սովորողները ստեղծագործաբար, անհատական մակարդակում յուրացնում են հոգևոր և մշակութային արժեքները:

Է Աբդուլինի հեղինակած **«Երաժշտական ընդհանրացման մեթոդի»** կիրառումը երեխաներին օգնում է յուրացնել երաժշտության մասին հիմնական գիտելիքները, որոնք ամփոփված են ծրագրի թեմատիկայում: Մեթոդն ուղղված է գեղարվեստական մտածողության ձևավորման և տվյալ կիսամյակի թեմաների հիման վրա դասընթացի ամբողջական ընկալմանը:

Լ. Գորյունովայի հեղինակած **«գեղարվեստական համատեքստ ստեղծման մեթոդ»**-ը զարգացնում է դպրոցականների երաժշտական մշակույթը՝ այն ընդլայնելով(դեպի արվեստիայլ ճյուղեր, պատմություն, բնություն, կենսական իրավիճակներ և այլն)՝ ստեղծելով գեղարվեստամանկավաժական հագեցած միջավայր: Այս մեթոդը հնարավորություն է տալիս պատկերացնել երաժշտությունն իր բազմաբնույթ կապերի ողջ հարստությամբ, զանազանել նմանությունն ու տարբերությունը արվեստի մյուս տեսակներից, գիտակցել կապը պատմության հետ և այլն:

- **«Գեղարվեստաստեղծագործական գործընթացի մոդելավորման մեթոդ»**

Գեղարվեստաստեղծագործական գործընթացի մոդելավորման մեթոդն ապահովում է երեխայի գիտելիքների ամրապնդման և իր գործունեության իմաստի ընկալմանը: Սովորողը մի պահ վերածվում է ստեղծագործող- կոմպոզիտորի, ստեղծագործող-բանաստեղծի, ստեղծագործող-նկարչի, որն արարում է արվեստի ստեղծագործություններ:

Դիտարկվող մեթոդն ըստ էության երաժշտության ծննդյան ուղին է, արարման պահի վերապրումը: Այս մեթոդի կիրառումը հատկապես արդյունավետ է խոշոր կտավի այնպիսի ստեղծագործություններ յուրացնելիս, որոնք նախատեսված են միայն ունկնդրման համար: Մեթոդի կիրառումը նպատակահարմար է նաև ժողովրդական երաժշտության յուրացման համար, երբ դպրոցականն ընկալում է ազգային մեղեդիների տարերքը:[5]

2.1 Խաղը՝ որպես մշակութային կարողունակությունը ձևավորող միջոց

Մանկավարժական բառարանում խաղը դիտարկվում է որպես մարդու գործունեության ակտիվ տեսակ: Հոգեբանամանկավարժական ժամանակակից տեսություններում խաղն ընդունվում է ոչ թե որպես հաճելի զբաղմունք, այլ որպես մասնագիտական գործունեության միջոց:

Մշակութային կարողություններ ձևավորելիս «խաղային տեխնալոգիաներ» հասկացությունը ներառում է մանկավարժական գործընթացի կազմակերպման միջոցների բավականին բավականին լայն խումբ՝ մանկավրժական խաղերի ձևով: Ի տարբերություն սովորական խաղերի՝ մանկավարժական խաղերն ունեն հստակ դրված ուսումնասիրման նպատակ՝ ուսումնաժանաչողական ուղղվածությամբ, և դրան համապատասխան արդյունք:Դասի ընթացքում խաղը դիտարկվում է որպես ուսումնական գործունեության դրդապատճառների, խրախուսական միջոց: Ուսումնադաստիարակչական գործընթացում սովորողների գործունեությունը պետք է կառուցվի այնպես, որ ստեղծագործաբար օգտագործվեն խաղերը և խաղային գործողությունները՝ հաշվի առնելով դպրոցականների տարիքային առանձնահատկությունները և պահանջները:

Խաղը՝ որպես մշակութային կարողունակությունը ձևավորող միջոց, նպատակ ունի յուծել հետևյալ խնդիրները՝

[5] Кабалевский Д.Б. ПедагогиЧеские размышления .- М; 1986

- **Դիդակտիկ** (ընդլայնել աշխարհայացքը, ակտիվացնել ճանաչողական գործունեությունը, ձևավորել այնպիսի կարողություններ, որոնք անհրաժեշտ են ոչ միայն ուսումնական գործընթացում, այլ կենսական իրավիճակներում),
- **Զարգացնող** (զարգացնել ուշադրությունը, հիշողությունը, խոսքը, մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական միտքը և այլն),
- **Դաստիարակող** (դաստիարակել ինքնուրույնություն, կամք, համագործակցային կարողություններ, ձևավորել բարոյական, գեղագիտական, աշխարհայացքային տեսանկյուններ և այլն),
- **Հանրամշակութային հասարակացման** (սովորողները ծանոթանում են համամարդկային արժեքներին, ճանաչում բազմամշակութայինաշխարհը, երաժշտության միջոցով ձեռք բերում միջմշակութային հաղորդակցման հմտություններ և այլն)։

Խաղի դիդակտիկական և զարգացնող նշանակությանն են անդրադարձել Պլատոնը, Արիստոտելը, Մ. Մոնտենը, Հ. Պեստալոցցեն, Ժ. Ժ. Ռուսոն,Է. Ժակ-Դալկրոզը, Կ. Գրոսը, Ֆ. Շիլերը, Զ. Ֆրեյդը, Ժ. Պիաժեն, Կ. Ուշինսկին, Լ. Վիգոդսկին, Ս. Ռուբենշտեյնը, Դ. Ուզնաձեն, Դ. Էլկոնինը և ուրիշները։

Գերմանացի գիտնական Կարլ Գրոսը, ով խաղի տեսության հիմնադիրն է 19-դարի վերջին, խաղը դիտարկում է որպես ապագայում կիրառելի դասավանդման ձև։ Խաղի ընթացքում վարժվելով՝ մարդը կատարելագործում է իր ընդունակությունները։

Շվեյցարացի հոգեբան Ժան Պիաժեն (20-րդ դար) գրում է. «Խաղը ստեղծագործելու ձև է, սակայն որոշակի նպատակով»[6]: Մարդու զարգացման գործընթացում խաղն ի հայտ է գալիս հետևյալ ձևերով՝

[6] Пиаже Ж. РеЧь и мышление ребенка.- М.: Издательство ,,Республика,, 1994

- *Խաղ-վարժություն* (ձևավորվում են բարդ հմտություններ),
- *Խաղ-խորհրդանիշ* (գեղարվեստական իրականությունը վերստեղծվում է նշանների, խորհրդանիշների շնորհիվ),
- *Կանոններով խաղ* (թույլ է տալիս մրցակցություն և համագործակցություն)։

Ռուս մանկավարժ Գերման Սելևկոն (20-21-րդ դդ.) առաջարկում է խաղը կիրառել հետևյալ դեպքում՝

- Որպես քեմայի յուրացման ինքնագործունեության տեխնոլոգիա,
- Որպես դասաժամ կամ նրա մի մաս,
- Որպես արտադասարանական գործունեության տեխնոլոգիա [3]։

Որպես անձի գործունեություն՝ Սերգեյ Շմակովը նշում է խաղի հետևյալ փուլերը՝

- Նպատակադրում,
- Պլանավորում,
- Նպատակի իրականացում,
- Արդյունքների ամփոփում ։[7]

Որպես գործընթաց՝ խաղի կառուցվածքն ընդգրկում է՝

- Դերեր, որոնք ստանձնում է խաղացողը,
- Խաղային գործունեություն՝ որպես այդ դերերի իրականացման միջոց,
- Խաղի ընթացքումառարկաների օգտագործում,
- Խաղացողների միջև հարաբերությունների ձևավորում,
- Սյուժե՝ բովանդակություն, որն իրականության մի մասն է կազմում, սակայն պայմանականորեն վերարտադրվում է խաղում։

Ս. Շմակովն առաջարկում է խաղի հետևյալ գործառույթները.

[7] Шмаков С.А. Игры уЧашихся – феномен культуры.- М; 1994

- **Զվարճանքի** գործառույթի նպատակն էզվզրճացնել, ոգևորել, հետաքրքրություն արթնացնել, հաճույք պատճառել սովորողներին: Զվարճանքի գործառույթը թույլ է տալիս ստեղծել բարենպաստ մթնոլորտ, հոգեբուխ ուրախություն: Խաղը կախարդական ուժունի. այն կարծես սնում է երևակայությունը՝ ի հայտ բերելով նրա դեռևս չբացահայտված անկյունները:
- **Հասարակական** գործառույթը թույլ է տալիս խաղի ընթացքում ընդգրկվել հասարակական հարաբերություններում, յուրացնել կենսական փորձ: Խաղը երեխայի սոցիալականացման զորեղ միջոց է, որը ներառում է նրա անձի ձևավորման, գիտելիքի, հոգևոր արժեքների յուրացման, հաղորդակցական հարաբերությունների ձևավորման նպատակաուղղված, վերահսկվող գործընթաց:
- **Միջմշակութային հաղորդակցման** գործառույթը նպատակաուղղված է հանրամշակութային արժեքների յուրացմանը: Խաղը ազգային է, բայց միաժամանակ նաև միջազգային, համազգային, համամարդկային երևույթ: Խաղը հնարավորություն է տալիս լուծել բախումնային իրավիճակները, կենսական իրողությունները հուզական ընկալման տարբեր մակարդակներում:
- Խաղի մեջ **ինքնահաստատման** գործառույթն ուղղված է սոցիալական դերի յուրացմանը, ինքնահաստատմանը: Մարդու համար հաճախ կարևոր է խաղի ընթացքը, որում նա ինքնադրսևորվում է, այլ ոչ թե խաղի արդյունքը, մրցակցությունը կամ նպատակին հասնելը: Մարդու կյանքում անընդհատ ստեղծվում են խաղային իրավիճակներ,որոնք կարող են նաև պահանջել մշակութային գիտելիքներ, ուստի նա պետք է կարողանա

լուծել հնարավոր խնդիրները և մոդելավորել դրանց լուծումը:

- **Ախտորոշման** գործառույթի միջոցով հնարավոր է կանխատեսումներ կատարել, քանի որ խաղի ընթացքում անձն իրեն դրսևորում է և մտավոր, և մտավոր տեսանկյուններից:

Խաղը նպաստում է անձի ինքնաճանաչմանը, մշակույթային արժեքների գնահատմանը, ինքնորոշմանը:

- **Թերապևտիկ** գործառույթի շնորհիվ խաղը կիրառվում է որպես այնպիսի դժվարություններ հաղթահարելու միջոց, որոնք կարող են ի հայտ գալ կենսական տարբեր իրավիճակներում՝ ուսման մեջ, միջմշակույթային հաղորդակցման և այլնի ժամանակ: Գնահատելով խաղային միջոցների թերապևտիկ նշանակությունը՝ Դ. Էլկոնինը գրում է. «Խաղային թերապիայի արդյունավետությունը որոշվում է հասարակական այն հարաբերությունների պրակտիկայով, որոնք երեխան ստանձնում է խաղի ընթացքում որևէ դեր կատարելով» [**3]:** Դերային խաղը երեխային հնարավորություն է տալիս հավասար լինել, թե մեծահասակների,թե իր հասակակցի հետ. այստեղ հարկադրանքը և ագրեսիան փոխարինվում են ազատությամբ և համագործակցությամբ, այսինքն՝ նոր իրական հարաբերությունների պրակտիկան, ի վերջո, ունենում է թերապևտիկ արդյունք:
- **Շտկման** գործառույթ, եթե սովորողները յուրացրել են խաղի կանոնները և բովանդակությունը, եթե յուրաքանչյուր մասնակից լավ գիտի ոչ միայն իր ընկերների դերը, եթե խաղի նպատակն ու անցկացման ընթացքը նրանց միավորում են, ապա խաղի շտկողական գործառույթն իրականացել է: Շտկողական խաղերը կարող

են օգնել վարքի շեղում ունեցող սովորողներին հաղթահարել այն ապրումները, որոնք խոչընդոտում են հասակակիցների հետ իրենց շփման և կարգավորում են ինքնազգացողությունը:[4]

Երաժշտամանկավարժական գործընթացում խաղային տեխնոլոգիաների արդյունավետության էեն երաժիշտ մանկավարժներ Է. Ժակ- Դալկրոզը, Կ. Օրֆը, Լ. Վիգոտսկին և ուրիշներ:

Է. Ժակ- Դալկրոզը՝ երաժշտառիթմիկ դաստիարակության հիմնադիրը, իր հիմնած մեթոդիկայում ընդգրկել է ռիթմիկ խաղեր: Երաժշտառիթմի խաղերը երաժշտության ակտիվ ընկալման ձևերից են,որոնք հիմնվում են հիմնական և պարային շարժումների վրա: Այդ խաղերը զարգացնում են երեխաների կողմից երաժշտության ընկալումը, շարժողական ունակությունները, ստեղծագործական կարողությունները: Խաղի ընթացքում պետք է օգնել երեխաներին շարժումներում արտահայտել որոշակի երաժշտական կերպար : Խաղն ունի նաև դաստիարակչական մեծ նշանակություն: Խաղի ընթացքում դրսևորվում են երեխայի բնավորությունը, անձնային որակները՝ քաջությունը, վախկոտությունը, արագությունը և այլն:

Փորձառու ուսուցիչը կարող է անհրաժեշտ ազդեցություն գործել երեխայի վրա՝ ձևավորելով սովորողի մոտ գեղագիտական և մշակութային ճաշակ:

Մինչ խաղն անցկացնելը ուսուցիչը պետք է ընտրի խաղի անցկացման մեթոդիկան, որոշի երաժշտառիթմիկ և շարժողական խնդիրները, սահմանի դաստիարակչական և կրթական նպատակները: Խաղի անցկացման ժամանակ մեծ նշանակություն ունի ուսուցչի խոսքը, որը բացահայտում է երաժշտության բովանդակությունը՝ երեխաների մեջվառաջացնելով հուզական

արձագանք, օգնում է գտնել արտահայտչական շարժումներ: Ուսուցչի մասնակցությունը նպաստում է որոշակի տրամադրություն ստեղծելուն:

Ստորև ներկայացվում է երաժշտառիթմիկ խաղ միջին դպրոցականների համար, այն է՝ «Դու դիրիժոր ես» խաղը:

Նկարագիրը. Խաղի ժամանակ դպրոցականներից մեկը ստանձնում է երգչախմբի ղեկավարի դերը:

Մեթոդական ցուցումներ. 6-րդ դասարանում «Դիրիժոր» ենթաթեման անցնելիս սովորում են Կոմիտասի «Իմ չինարի յարը» երգը, որի կրկներգը կատարում են դինամիկ նշաններով: Երգը սովորելիս ուսուցիչը դիմում է աշակերտներին, որպեսզի ուշադիր հետևեն իր ձեռքի շարժումներին (հատկապես դինամիկ նշաններով երգելիս): Ապա ուսուցիչը որևէ մեկին առաջարկում է դառնալ խմբավար: Աշակերտը կանգնում է դասարանի դիմաց, իսկ ուսուցիչը հետևում է նրա կեցվածքին: Երգի մեղեդային բնույթը ենթադրում է ձեռքերի մեղմ, թեթև, նուրբ շարժումներ: Երգը մեկ երկու անգամ կատարելուց հետո խմբավարը փոխվում է:

Նպատակը. հնարավորություն տալ սովորողին ղեկավարել դասարանը, հաղորդակցվել ազգային մշակույթին Կոմիտասի երաժշտության միջոցով, ձեռքի շարժումով զգալ և արտահայտել երաժշտության տրամադրությունը, ձևավորել և զարգացնել անձի մի շարք հատկանիշներ՝ կազմակերպվածություն նախաձեռնողականություն, ինքնակառավարում, պատասխանատվություն, լիդերական որակներ:

Եզրակացություն

Հետազոտության նպատակն է հիմնավորել սովորողների մոտ մշակութային արժեքների գնահատման գործում սովորողների կողմից մշակութային կարողունակությունների զարգացման նպատակով երաժշտություն առարկայի դասավանդման ընթացքում ուսուցչի կողմից կիրառվող միջոցների և մեթոդների ընտրության հարցը: Մանկավարժական հետազոտությունների վերլուծության հիման վրա բացահայտվել են մշակութային կարողունակությունների ձևավորման գործում փոխկապակցված կառուցվածքային բաղադրիչները՝ մոտիվացիոն, կամային և բովանդակային-գործառնական և այլն: Աշակերտների մշակութային արժեքների ճանաչողական գործառույթի զարգացման առանցքային գործոնը նրանց ինքնուրույն ճանաչողական գործունեության ակտիվացումն է:
Մեր ուսումնասիրության մեջ որպես ձևավորված չափանիշ օգտագործեցինք մշակութային կարողունակության գործում անհրաժեշտ մեթոդների և միջոցների ճանաչողական կողմը:
Փորձարարական աշխատանք կատարելու հիման վրա կարելի է եզրակացնել, որ դպրոցում աշակերտների մշակութային կարողունակությունների զարգացման նպատակով երաժշտություն առարկայի դասավանդման ընթացքում ուսուցչի կողմից կիրառվում են համապատասխան միջոցներ և մեթոդներ, բայց դասարանում ուսուցիչները հիմնականում օգտագործում են տեխնոլոգիաներ, որոնք նախատեսված են սովորողների կողմից մշակութային արժեքներին վերաբերող գիտելիքների վերարտադրողական յուրացման համար: Դասագրքերի մեծ մասի նյութը քիչ է նպաստում անհատականության այս որակի զարգացմանը, դասագրքերի խնդիրների մեծ մասը ներառում է աշխատանքի կազմակերպում վերարտադրողական մակարդակում:
Արդյունքում սովորողների մշակութային կարողունակությունների զարգացումը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Ուսումնասիրության ընթացքում մշակվել է առաջադրանքների դասակարգում, որը հնարավորություն է տալիս հիմնավորել կրթական առաջադրանքների համակարգը, որը կնպաստի ինքնուրույն ճանաչողական գործունեությունը վարելու հմտությունների և կարողությունների ձևավորմանն ու կատարելագործմանը, դրա զարգացման ուղիներն ու միջոցները: Պակաս կարևոր չի ուսուցչի ուղղորդող դերը: Կարևոր, որ ուսուցիչը կարողանա ստեղծել բարենպաստ պայմաններ, որպեսզի երեխան զարգացնի իր ընդունակությունները ու կյանքի համար դաս քաղի ուսուցանվող նյութից: Հենց դա էլ, ըստ իս, կարող ենք համարել ուսուցչի առաքելությունը:
Եվ վերջապես, կան լավ սովորողներ և թույլ սովորողներ, կան արագ սովորողներ և դանդաղ սովորողներ, և վերջապես՝ եթե կան համապատասխան մեթոդներ և միջոցներ , ապա աշակերտների համար սովորելը դառնում է ավելի դյուրին և հիմնավորված:

Հավելված



ԻՄ ՉԻՆԱՐԻ ՑԱՐԸ

ИМ ЧИНАРИ ЯР

Allegretto con amabilita ♩= 72

Sopr. solo

Piano

Ա - հավ քաղ - ցր - ռած ե - լամ, իմ չի - նա - ր ցա - ր.

մեր գա - ղը գող - ցամ ե - լամ. դար - դի - մամ գար - ր.

ցըլ - նա - մա. ար - ցիվ մու - ն. իմ չի - նա - ր ցա - ր.

Активац
Чтобы ах
раздел "П



Արև թրմվելով նկամ,
Իմ լինայի լալը,
Մեր բանը կլսվով նկամ.
Դարդիման լալը.
Թրչնամու ոգին մտնի,
Իմ լինայի լալը,
Իրա չար սրտով նկամ:
Դարդիման լալը:

Իմ լինայի լալը,
Իմ լինայի լալը,
Իմ լինայի լալը,
Գոլնական լալը:

Ճրագը վառա, վառա,
Հոր ճառ վառանալ դառա.
Մեր ու աղբեր թող տրվի.
Ես իմ սիրածին առա:

Քարափի ծերին կանչի՝.
Ինչ թշնամին անանչի.
Արևի՝դ մտնեմ, ա՜խ ջան.
Լինայի պես կանանչի՝:

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Օգտագործված գրականություն

1. Գևորգյան Ա. Երաժշտամանկավարժական տեխնոլոգիաներ։ Ուսումնամեթոդական ձեռնարկ/Աիտագերս 2015.- 120 էջ։
2. Данилов М.А. Процесс обуЧения в советской школе/ Данилов М.А..-М; 1960
3. Кабалевский Д.Б. ПедагогиЧеские размышления .- М; 1986
4. Пиаже Ж. РеЧь и мышление ребенка.- М.: Издательство ,,Республика,, 1994
5. Шмаков С.А. Игры уЧашихся – феномен культуры.- М; 1994
6. Wikipedia.org
7. www.arlis.am